



Հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն
Մ.Ա. Մելքոնյան

Կ Ա Ր Ծ Ի Ք

Արմինե Հարությունի Տիգրանյանի «Մշակութային ժառանգության պահպանումը . տեսական մոտեցումները, միջազգային փորձը և Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները» պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության վերաբերյալ

2020 թ. աշնանը և 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը Թուրքիայի և միջազգային ահաբեկչական խմբավորումների աջակցությամբ զավթեց Արցախի Հանրապետության ողջ տարածքը և ցեղասպանական գործողություններով բռնատեղահանեց հայկական երկրորդ հանրապետության շուրջ 150 հազար ազգաբնակչությանը: Վերջին երեք հազարամյակի ընթացքում առաջին անգամ հայ մարդու բնօրրաններից մեկը լիովին դատարկվեց: Ադրբեջանը, Արցախի տարածքից հայկական հետքը լիովին վերացնելու նպատակով, թե՛ ռազմական գործողությունների ընթացքում և թե՛ դրանից հետո ընկած ժամանակահատվածում ծրագրված ձևով ոչնչացնում է նաև հայկական մշակութային ժառանգությունը: Ադրբեջանի կողմից մշակութասպան գործողությունների ծալքերը բացահայտելու և միջազգային հանրությանը այդ ամենը ներկայացնելու առումով հայ փորձագետների և գիտնականների կողմից որոշ աշխատանք է կատարվել: Սակայն դա բավարար չէ: Այդ բացը լրացնելուն է միտված նաև Արմինե Տիգրանյանի «Մշակութային ժառանգության պահպանումը . տեսական մոտեցումները, միջազգային փորձը և Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները» թեկնածուական ատենախոսությունը:

Արմինե Տիգրանյանին հաջողվել է մշակութային քաղաքականություն իրականացնող միջազգային կազմակերպությունների որոշումների, հոչակագրերի, կանոնակարգերի քննությամբ և այդ ամենի խորապատկերի վրա ցույց տալ Արցախի մշակութային ժառանգության նկատմամբ Ադրբեջանի ցեղասպանական գործողություններն ու դրանց հետևանքները: Ատենախոսության հեղինակը իրավացիորեն նկատել է, որ հազարամյակների ընթացքում

արցախահայության ստեղծած նյութական և ոչ նյութական մշակույթի արժեքները համաշխարհային մշակութային ժառանգության անրաժանելի մասն են: Այդ ամենի ոչնչացումը միտված է աշխարհի մշակութային բազմազանության աղքատացմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից՝ չորսական ենթագլուխներով, եզրակացությունից, զրականության ցանկից և «44-օրյա պատերազմի արդյունքում Արցախից բռնի տեղահանված արցախահայերի (Շուշիից և Հադրութից) մշակույթի իրացման խոչընդոտները և ոչ նյութական ժառանգության պահպանության խոչընդոտները. Հարցաշար բռնի տեղահանված արցախահայերի հետ» վերանգիրը կրող հավելվածից՝ ընդամենը 204 տպագիր էջ:

Աշխատության ներածության մեջ հեղինակը ներկայացնում է ատենախոսության նպատակը և խնդիրները, հիմնավորում թեմայի արդիականությունը, ներկայացնում գիտական նորություն ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մշակութային ժառանգության պահպանման տեսական հիմքերը և Արցախի ժառանգության ոչնչացումն Ադրբեջանի կողմից» գլխում քննության է ենթարկված համամարդկային մշակութային ժառանգության տեսական հիմքերը, և այդ խորապատկերի վրա մատնանշվում է Արցախի հայկական մշակութային ժառանգության ոչնչացման՝ Ադրբեջանի պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, դրա իրականացման գործիքակազմը: Վերոհիշյալ գլխում ներկայացված են ինչպես քրիստոնեահենք, այնպես էլ աշխարհիկ նյութական և ոչ նյութական պատմամշակութային ժառանգության վերացման փաստերն ու մեկնաբանությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմները միջազգային համակարգում» գլուխը նվիրված է զինված բախումների ժամանակ և հետպատերազմյան շրջանում՝ բռնազավթված տարածքում Արցախի նյութական մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրներին: Միջազգային համապատասխան կազմակերպությունների կողմից ընդունված որոշումների, կոնվենցիաների հիման վրա ներկայացված է Արցախի յուրօրինակ կարգավիճակը և դրանից բխած հայկական երկրորդ հանրապետության մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները՝ միջազգային հումանիտար իրավունքների շրջանակներում:

Ատենախոսության երրորդ՝ «Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային համակարգը ժառանգության լայն հայեցակարգի, պահպանման սկզբունքների և մշակույթի իրավունքի համատեքստում» գլխում քննության է առնված Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության հնարավորությունները՝ միջազգային կառույցների կողմից կյանքի կոչած մշակույթի իրավունքի համատեքստում: Վերոհիշյալ գլխում բացահայտվել են Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգությանը սպառնացող մարտահրավերները, մասնավորապես՝ որոնք առնչվում են Արցախի մշակութային համայնքների կազմաքանդման, ավանդույթների, բարբառի, մշակութային արտահայտման այլ ձևերի կորստի, շարունակականության ընդհատման և սերունդներին փոխանցման գործընթացի խաթարման հետ:

Ատենախոսության չորրորդ «Միջազգային հանրության անհամաչափ արձագանքը՝ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացմանը» գլխում ներկայացված է 2020 թ. պատերազմից հետո «խաղաղության» պայմաններում ժառանգության լայն հայեցակարգի ներքո Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության համակարգային խնդիրները:

Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, յուրացման, պղծման, անվանափոխման գործընթացներում միջազգային հանրության գործողությունների արդյունավետության վերաբերյալ տրված են համապատասխան գնահատականներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հանրագումարի են բերվել եզրակացությունների բաժնում:

Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել սկզբնաղբյուրները, մամուլում և համացանցում տեղ գտած նյութերը, ականատեսների, ցեղասպանությունը վերապրածների հուշագրությունները, համապատասխան մասնագիտական գրականությունը:

Կարևորելով ատենախոսի կողմից կատարված ինքնուրույն աշխատանքը, գնահատելով ներկայացված մոտեցումներն ու եզրակացությունները՝ այդուհանդերձ, պետք է նշենք, որ ատենախոսությունը զերծ չի նաև թերություններից ու բացթողումներից, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը:

1. Ատենախոսության վերնագիրը՝ «Մշակութային ժառանգության պահպանությունը. տեսական մոտեցումները, միջազգային փորձը և Արցախի մշակութային ժառանգության

պաշտպանության խնդիրները» ներկայացված է ընդհանուր ձևով. Առաջարկում ենք՝ վերնագիրը ձևակերպել հետևյալ կերպ. «Արցախի մշակութային ժառանգության պահպանությունը, տեսական մոտեցումները, միջազգային փորձը և մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրներն արդի փուլում»: Այսինքն վերնագրի մեջ շեշտը դրվեր Արցախի մշակութային ժառանգության պահպանության վրա, քանզի ատենախոսության բովանդակությունում հիմնականում ներկայացվում են Արցախի մշակութային ժառանգության հետ առնչվող խնդիրները:

2. Ներածության մեջ ատենախոսության հեղինակը ներկայացնում է, որ Արցախի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հաշվառված է 4000 հուշարձան: Այո, իրավացիորեն նկատենք, որ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության կողմից մինչև 2020 թ. սեպտեմբերի 27-ը պաշտոնապես գրանցվել էր 4000 հուշարձան, ինչը և օգտագործվել է հեղինակի կողմից որպես հիմք, բայց դրանից հետո, մինչև 2023 թ. սեպտեմբերի 19-ը հաշվառվել է ևս 1000 հուշարձան: Այդպիսով, պետության կողմից հաշվառված հուշարձանների թիվը անցնում է 4000-ի սահմանները, հասնելով մոտ 5000 հուշարձանի:
3. Առաջին գլխում կարելի էր անդրադառնալ նաև 2020 պատերազմի օրերին Ադրբեջանի կողմից մշակութային ժառանգության կանխամտածված ոչնչացման մասին ԱՀ իշխանության մարմինների, մասնավորապես, ԱԺ-ի, Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության և Մարդու իրավունքների պաշտպանի կողմից միջազգային կառույցներին ուղղված դիմումներին: Իսկ Երկրորդ գլխի երկրորդ՝ «Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությունը միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության շրջանակում» ենթահարցի տակ կարելի էր քննարկման նյութ դարձնել նաև ԱՀ ԱԺ-ի կողմից մշակութային ժառանգության պահպանման մասին միջազգային որոշ կոնվենցիաների միացման հարցը, օրինակ՝ 2014 թ. հոկտեմբերի 29-ին ԱԺ-ի ընդունած և 2014 թ. նոյեմբերի 22-ին ուժի մեջ մտած «Եվրոպական մշակութային կոնվենցիան վավերացնելու մասին» ԼՂՀ օրենքը: Չնայած ՄԱԿ-ի կողմից միջազգայնորեն Արցախի Հանրապետությունը որպես ազգային պետություն ճանաչված չլինելու խնդիր կար, այնուամենայնիվ, նմանատիպ որոշումները նույնպես հիմք են արցախահայության իրավունքների, այդ թվում նաև մշակութային ժառանգության պահպանման հարցում:

4. Ատենախոսության հեղինակը, թեև աշխատանքում անդրադարձել է Ադրբեջանի կողմից Ավանակարա քարայրի, Մարտակերտի շրջանի Հայկաջուր գյուղի վաղ քրիստոնեական դամբարանադաշտերի՝ Ադրբեջանի կողմից ոչնչացման փաստին, սակայն, կարծում ենք, որ առավել մեծ ուշադրության էին արժանի ռազմական գործողությունների ժամանակ հրետանակոծության, ծանր տեխնիկայի տեղաշարժի ընթացքում Ադրբեջանի կողմից միտումնավոր ոչնչացված նախաքրիստոնեական ժամանակաշրջանի հայկական այլ մշակութային արժեքներ, առանձնապես, հարթավայրային և նախալեռնային հատվածներում շատ թե քիչ պահպանված դամբարաններ, հնադարյան ամրոցների մնացորդներ և այլն, որոնք անժխտելի ապացույցներ են հնագույն ժամանակներից այդ տարածքներում, այդ թվում արաքսամերձ շրջաններում հայկական ներկայության մասին:

5. Առաջին գլխի չորրորդ ենթաբաժնի՝ «Արցախահայերի ոչ նյութական մշակութային ժառանգության ոչնչացումն Ադրբեջանի կողմից» թեմայի շրջանակում նպատակահարմար կլիներ անդրադառնալ նաև արցախահայության՝ դեռևս հեթանոսական ժամանակներից եկող սուրբ ծառերի և քարերի պաշտամունքի երևույթին: Այս սրբավայրերը ևս ոչնչացման վտանգի տակ են: Բացի այդ, Հադրութի և Շուշիի շրջանների ոչ նյութական մշակութային արժեքների նկարագրություններից գատ, կարևոր կլիներ առավել մեծ ուշադրություն դարձնել Արցախի այլ շրջանների ոչ նյութական ժառանգության նմուշների նկարագրությանը, մասնավորապես՝ Արցախում աշնանը «խըշեմնաջրի»¹ խմելու սովորությանը և թթից օղի թորելու մշակույթին:

6. Հուշարձանների ոչնչացման փաստերն արձանագրելիս նպատակահարմար կլիներ անդրադառնալ ոչ միայն Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում իրականացնող «Monument Watch» կայքին, այլ նաև այլ փորձագետների և կազմակերպությունների դիտարկումներին (Արցախի թեմ, Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող հիմնադրամ և այլն): Բացի այդ, ցանկալի կլիներ

¹ Աշնան օրերին մարդիկ բարձրանում էին բնակավայրերից հեռու անտառուտ լեռնային գոգավորություններ, որտեղով հոսում էին տարբեր ծառատեսակների տերևների, ծաղիկների բուրմունքներով հագեցված գետակներ, առվակներ, և խմում բուրումնավետ ջուրը՝ ըստ էության բնական թուրմը: Դա հայրենի լեռնաշխարհի հետ հայ մարդու հավիտենական կապի մի գեղեցիկ դրվագ է:

աշխատանքի վերջում, որպես հավելված, աղյուսակների ձևաչափով ներկայացնել Արցախի նյութական մշակութային արժեքները՝ ըստ շրջանների:

7. Ատենախոսության մեջ տեղ են գտել նաև որոշ լեզվաոճական խնդիրներ և ոչ հստակ ձևակերպումներ:


Որոշեցին՝ Արմինե Հարությունի Տիգրանյանի «Մշակութային ժառանգության պահպանումը. տեսական մոտեցումները, միջազգային փորձը և Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները» Թ.00.06 մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին ու մասնագիտությանը, հեղինակի հրատարակած հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Արված դիտողությունները, ընդհանուր առմամբ, չեն ազդում կատարված աշխատանքի որակի վրա, որը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներակայցվող պահանջներին, և հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Եզրակացությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Արցախի պատմամշակութային ժառանգության և արդի քաղաքական զարգացումների գիտական խմբի 2025 թ. մարտի 4-ի նիստում (արձանագրություն թիվ 2):

ՀՀ ԳԱԱ ՊԻ Արցախի պատմամշակութային

ժառանգության և արդի քաղաքական

զարգացումների գիտական խմբի ղեկավար,

պ.գ.դ. պրոֆեսոր



Վ.Ն. Բալայան

ՀՀ ԳԱԱ ՊԻ Արցախի պատմամշակութային ժառանգության և արդի քաղաքական

զարգացումների գիտական խմբի ղեկավար, պ.գ.դ. պրոֆեսոր Վ.Ն. Բալայանի

ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ  Ն.Ղ. Սուրադյան

